ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով, սահմանված կարգերին և պահանջներին համապատասխան Ձեր քննարկմանն է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեն: Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեն կազմվել է համայնքի զարգացման 2021-2026թթ. ինգամյա և 2025-27թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի դրույթներին համապատասխան:

Կարևորվում է՝

- Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
- Մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող որոշումների կայացմանը՝ հարցումների,քննարկումների և քվեարկությունների միջոցով:
- Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների շարունակական հիմնանորոգումը, ջեռուցման համակարգերի կառուցումը,նոր գույքի ձեռք բերումը,մշակույթի տների, գրադարանների, արտադպրոցական ուսումնական հաստատությունների պայմանների բարելավումը:
- Ճանապարհային տնտեսության, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում տարվող աշխատանքները:
- Բազմաբնակարան շենքերի սպասարկման,բակային տարածքների բարեկարգմանն ուղղված ծրագրերի մշակման, նոր շենքերի կառուցման, ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- Փողոցային լուսավորության համակարգի շարունակական արդիականացումը, էներգախնայող համակարգի ներդրումը:
- Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Արմավիր համայնքում 2025 թվականին նախատեսված է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի Արարատյան-Սայաթ-Նովա 5Ա բազմաբնակարան բնակելի շենք հատվածի, Հ.Ավետիսյան փողոցի Ս.Շահումյան-Հանրապետություն հատվածի հիմնանորոգում:
2. Արմավիր քաղաքի Մ.Բաղրամյան փողոցի 19,21,23,Հանրապետության փողոցի 35,37,39,43, Չարենցի փողոցի 1/1,5,7,9,34,36 Ա.Ջիվանու փողոցի 13,15,17,19, Սայաթ-Նովա 120 և Մ.Մաշտոց փողոցի 3Ա բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքներ:
3. Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի թիվ 6,9 փողոցի,Մյասնիկյան գյուղի Խանջյան փողոցի Երևանյան-Գագարին հատվածի, Լենուղի գյուղի թիվ 10 փողոցի հիմնանորոգման աշխատանքներ:
4. «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 6 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի օգտագործվող մասնաշենքերի կառուցում, հարակից բակային տարածքի բարեկարգում, գույքի և սարքավորումների ձեռք բերում:
5. Արմավիր քաղաքի Հ.Ավետիսյան փողոցի Ս.Շահումյան-Խ.Աբովյան հատվածի և Սայաթ-Նովա փողոցի Արարատյան-Սայաթ-Նովա 5Ա բազմաբնակարան բնակելի շենք հատվածի խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցում:
6. Արմավիր քաղաքի Մ.Բաղրամյան փողոցի 19,21,23,Հանրապետության փողոցի 35,37,39,43 , Չարենցի փողոցի 1/1,5,7,9,34,36 , Ա.Ջիվանու փողոցի 13,15,17,19 , Սայաթ-Նովա 120 և Մ.Մաշտոց փողոցի 3Ա բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցում:
7. «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում:
8. Արմավիր համայնքի Հացիկ գյուղում մանկապարտեզի նոր շենքի կառուցում:
9. Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի չգործող մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Արմավիր համայնքի 2025թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝

Ընդամենը 3 361 242,9 հազար դրամ.

Արմավիր համայնքի 2025թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 1 315 898,2 հազար դրամ: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար միջոցները՝ 5997,0 հազար դրամ: Պետական բյուջեից տրվող պաշտոնական դրամաշնորհներ՝ 2 048 347,7 հազար դրամ: 2025թ. գույքային հարկերի գծով նախատեսվել է 825 505,0 հազար դրամ եկամուտ: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել գույքային հարկի հաշվառման, սպասարկման և գանձման բաժնի կողմից ներկայացված հաշվարկները: Տեղական տուրքերի գծով՝ նախատեսվել է 86 579,5 հազար դրամ: Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերի գծով նախատեսվել է 44 127,8 հազար դրամ՝ հիմք նոտարների և ՔԿԱԳ-ի կողմից տրված կանխատեսման հաշվարկները:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ 2 048 347,7 հազար դրամ, որից պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 1 915 515,1

հազար դրամ՝ հիմք «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 2832,6 հազար դրամ, պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 130 000,0 հազար դրամ, որն ուղղվում է մասնակցային բյուջետավորմամբ իրականացվող ծրագրերի ֆինանսավորմանը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 356 682,9 հազար դրամ, որից՝ գույքի վարձակալությունից եկամուտների գծով՝ 52 982,1 հազար դրամ, համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից՝ 7518,5 հազար դրամ, տեղական վճարներ՝ 266 822,3 հազար դրամ:

Հաշվի առնելով գանձելիության մակարդակը՝ բյուջեում ընդգրկվել են նաև նախորդ տարիներից կուտակված պարտքերից գանձումներ:

Արմավիր համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված եկամուտները կցվում են (հատված 1):

Նախորդ 2023 թվականի փաստացի, 2024 թվականի հաստատված և 2025 թվականի

նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է /համեմատական 1/:

ԾԱԽՍԵՐ

Արմավիր համայնքի 2025թ. բյուջեով ծախսերը նախատեսվել են՝

Ընդամենը 3 361 242,9 հազար դրամ, այդ թվում

Ընթացիկ ծախսերի գծով՝ 2 731 242,9 հազար դրամ,

Կապիտալ ծախսերի գծով՝ 630 000,0 հազար դրամ:

Արմավիր համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում են (հատված 2, 3 և 6): Համայնքի բյուջեի ծախսեը հաշվարկելիս առաջնորդվել ենք հաշվի առնելով նախկինում բյուջեի ծախսերի փաստացի կատարված արդյունքները և 2025թ. համար լրացուցիչ անհրաժեշտ սպասվելիք ծախսերը:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 752 290,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

01 բաժին 1 խումբ 1 դաս՝ *«Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով* նախատեսվել է 487 630,0 հազար դրամ, որից 477 630,0 հազար դրամ ընթացիկ ծախս և 10 000,0 հազար դրամ կապիտալ ծախս:

01 բաժին 6 խումբ 1 դաս՝ *«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով* նախատեսվել է 98660,0 հազար դրամ ընթացիկ ծախս և 166 000,0 հազար դրամ կապիտալ ծախս, որից 156 000,0 հազար դրամը նախանեսվում է մասնակցային բյուջետավորման ծրագրերին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 395 924,4 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 2 խումբ 4 դաս՝ *«Ոռոգում» ծրագրով նախատեսվել է* 99 924,4 հազար դրամ ընթացիկ ծախս՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Ջրամատակարար» ՀՈԱԿ-ի աշխատանքները ֆինանսավորելու համար:

04 բաժին 5 խումբ 1դաս՝ *« Ճանապարհային տրանսպորտ» ծրագրով* նախատեսվել է 322 000,0 հազար դրամ, որից ճանապարհային ընթացիկ նորոգում 32 000.0 հազար դրամ,որի մեջ ներառված են համայնքի գյուղական բնակավայրերի դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգումը, համայնքային ճանապարհների կապիտալ նորոգում՝ 290 000,0 հազար դրամ:

04 բաժին 9 խումբ 1դաս՝ *« Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով* նախատեսվել է -26000,0 հազար դրամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օրատումից մուտքեր:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 399 996,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս *«Աղբահանում» ծրագրով* նախատեսվել է ՝ 399 996,0 հազար դրամ ընթացիկ ծախս՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության աշխատանքները ֆինանսավորելու համար:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 06 ԲԱԺԻՆԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 275 381,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

06 բաժին 3 խումբ 1 դաս՝ *«Ջրամատակարարում»* ծրագրով նախատեսվել է 80 000,0 հազար դրամ ընթացիկ և 200 000,0 հազար դրամ կապիտալ ծախս:

06 բաժին 4 խումբ 1 դաս *«Փողոցների լուսավորում» ծրագրով* նախատեսվել է 66 066,0 հազար դրամ ընթացիկ ծախս՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուսավորություն» ՀՈԱԿ-ի աշխատանքները ֆինանսավորելու համար:

06 բաժին 6 խումբ 1 դաս *«Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով* նախատեսվել է 9 315,0 հազար դրամ ընթացիկ ծախս:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 121 703,1 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 1 դաս՝ *« Գրադարաններ» ծրագիր* 33 477,1 հազար դրամ ընթացիկ ծախս:

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ *«Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագիր* 38 200,8 հազար դրամ ընթացիկ ծախս:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ *« Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագիր* 50 025,0 հազար դրամ ընթացիկ ծախս: Նշված ծրագրում ընդգրկվել են «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի զբոսայգի» ՀՈԱԿ-Ի ծախսերը՝ 21475,2 հազար դրամ և համայնքում կազմակերպվելիք միջոցառումների գծով ծախսերը՝ 28 550.0 հազար դրամ: Այս ծրագով նախատեսվում է 300,0 հազար դրամ ծախս ՝ համայնքում Երիտասարդների օրվան նվիրված միջոցառման համար:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 1 021 431,6 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

09 բաժին 1 խումբ 1 դաս՝ *«Նախադպրոցական կրթություն» ծրագիր՝* 833 456,6 հազար դրամ, որը ներառում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի մանկապարտեզների սուբսիդիայի գծով ծախսերը՝ 763 456,6 հազար դրամ, կապիտալ ծախսերը՝ 70 000,0 հազար դրամ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 6,11 մանկապարտեզների շենքերի կապիտալ նորոգումների համար :

09 բաժին 5 խումբ 1 դաս՝ *«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր* 187 975,0 հազար դրամ ընթացիկ ծախս:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 18000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ *«Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագիր* 18000,0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են թաղման ծախսերի մասնակի հատուցման համար, սոցիալապես անապահով խավերին տարին մեկ անգամ համայնքի ղեկավարի կամ ավագանու որոշմամբ օգնություններ տրամադրելու համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 876 516,8 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

11բաժին 1խումբ 2 դաս՝ *«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ»* վարչական մասում կազմում է 876 516,8 հազար դրամ, որից 500 000,0 հազար դրամը հատկացվում է բյուջեի ֆոնդային մաս՝ կապիտալ ծախսերը ֆինանսավորելու համար:

Նախորդ 2023 թվականի փաստացի, 2024 թվականի հաստատված և 2025 թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, հավելուրդի, դեֆիցիտի մարման աղբյուրների առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են /համեմատական 2,3,4/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ